

պիտի գործէ այն ատեն՝ երբ այժմեան գործիքները աւրուին դիպուածաւ, կամ նորոգումի պէտք ունենան:

Ընկերութիւնը այս որոշումը տուաւ այն բազմաթիւ բողոքներէն հարկադրուած որք ուղղուեցան իրեն վերջերս՝ երբ դիպուածի մը առթիւ՝ քաղաքս քանի մը գիշեր մութի մէջ մնաց ու շատ գործատեղիներ ալ ստիպուեցան դադրել՝ շարժիչ գորութիւն չունենալու համար:

—Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ պաշտօնէից տարեշրջանը լրանալու մօտ ըլլալով ամսոյ ՉԱին՝ Կիրակի օրը ընտրութիւն պիտի կատարուի նոր պաշտօնէից համար: Ընտրողական ժողովը ընտրելեաց եռապատիկ ցանկ մը պատրաստած ու զրկած է բոլոր քուէատու անդամներուն՝ մասնաւոր նամակաւ մը:

Ընտրուելիք պաշտօնեաները պիտի լինին՝ 5 անձերէ բաղկացեալ Հոգաբարձութիւն մը, ընդհանուր ժողովոյ ատենապետ մը և ատենադպիր մը:

—Գէորգ Թապաքեան՝ Հայ դերասան երիտասարդը որ իր արուեստի շնորհիւ ծանօթացած է Եգիպտոսի, Պուլկարիոյ և Ռումանիոյ ազգայնոց, և որ հռչակաւոր Տիկին Սիրանոյշի ընկերութեան մէկ անդամը եղած է երկար ժամանակ, քաղաքս կը գտնուի այժմ: Պ. Թապաքեան տեսնելով թէ տեղւոյս երիտասարդութեան մէջ փափաք մը կայ թատերական խողեր տալու, և լսելով թէ մասնաւոր դերասանական խումբ մ'ալ հոստեղ գոյութիւն ունի արդէն, ձեռնարկած է նոյն խումբը կազմակերպել, դերասանները վարժեցնել ու պատրաստել զանոնք նորանոր թատերախաղներ տալու: Իբր առաջին փորձ՝ Պ. Թապաքեան կը պատրաստէ այժմ իր նոր ընկերները՝ Կոնակէն արարուած մը, Մոլիէրի "Գաւաթ մը թէյ" զաւեշտը և ազգային—քաղաքական մենախօսութիւն մը տալ մօտիկ ապագային մէջ:

—Գրադարանի Միութեան ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ անցեալ Չորեքշաբթի երեկոյ՝ 26 անդամներու ներկայութեամբ: Սովորական անհասկացողութիւններն ու սնտոյի վիճարանութիւններն բաւական երկար ատեն շարունակուելէ վերջ՝ հինգ անձերէ բաղկացեալ յանձնախումբ մը ընտրուեցաւ՝ կանոնադիրը վերաքննելու պաշտօնով: Յանձնախմբի անդամներն են Տրք. Յ. Նշիկեան, Ա. Սէքլեմեան, Յ. Վարդանեան, Յ. Ասլանեան և Հ. Էկինեան:

—Յակոբ Վարդանեանի մէկ տարեկան աղջիկը մահկանացուն կնքեց անցեալ Երեքշաբթի օր: Թաղումը կատարուեցաւ հետեւեալ օրը՝ ազգային գերեզմանատան մէջ:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

—0— Պօսթըն, 28 Նոյ. Մանուկեանի դասը վճարեկ ատենին ներկայացնելու դիտումով սկսուած հանգանակութիւնը ի՞նչ արդիւնք ունեցաւ: Պիտի շարունակէ՞ք զայն թէ ոչ: Մարդասպանները քաջալերողներէն չեմ և ոչ արէնագէտ, բայց դատավարութեան մանրամասնուչ

ՁԵՐ ԱՏԱԽՁՆԵՐԸ ԳՆԵՑԻՔ

Ա. Ա. ՓԻՐՄ

ԱՏԱԽՁԻ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԷՆ: ՓՐԷՉՆՕ ՔԱԼ.

ԱԸԹՐԸՆ ՓԸՍԻՑԻՔ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Եթէ Թուրքիայէն Ամերիկա եկող բարեկամ մը ունիս, կամ եթէ կը փափաքիս Թուրքիա կամ այլուր երթալ, թիքէթի համար դիմէ Սըթըրըն Փըսիֆիք ընկերութեան օֆիսը: Ամերիկայի ու է մէկ կէտին համար տոմս կը վաճառէ միենոյն ընկերութիւնը: Աւելի տեղեկութեանց համար դիմել առ

Ճ. Ֆ. ՀԻՔՍԸՆ Թ. Ֆ. ՊՐՕՍՆՀԱՆ ՏԻՎԻՃԸՆ Փասինճըր Էյճընթ: ՍԻԹԻ ԹԻՔԷԹ Էյճընթ Քաղաքի գրասենեակը—Թիւ 1013 ՃԷՅ Փողոց, Նոր Փաթըրսըն Պլաքին առջև

ՍԵՐՈՒԲԵԱՆ ԵՂԲԱՄՔ

Ամենաբարձր գին կը վճարեն ԹՈՒՋԻ, ԴԵՂՋԻ ՈՒ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԶՈՐ ՊՏՈՒՂՆԵՐՈՒ:

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ 'ՔԱՂԱՔԱՅԻ' Ի

Միաըպօրօ, Մասս.	—	—	Պ. Միքայէլեան
Ուայթինսօլի, ' — —	—	—	Հ. Նիկողոսեան
Ուէսթ Հոպքըն, Ն. ձէրզի — —	—	—	Հ. Մազուճեան
Պրայթըն, Մասս. — —	—	—	Գ. Վարդանեան
Պօսթըն, Մասս. — —	—	—	Սիրականեան և Դանիէլեան
Սէլիմ, ' — —	—	—	Ա. Թաշճեան
Սըմիթ, Նիւ ձէրզի — —	—	—	Ս. Հացագործեան
Հէլրի, Մասս. — —	—	—	Մ. Կարօ
Սէնթըրլ Ծօլս, Մասս. — —	—	—	Նշան Մինասեան

Ձեր Ապահովագրութեան համար դիմեցէք առ

Պ. Ֆ. ՇԵՖԻՆԴՐԱՆ ԵՆ ԸՆԿ.

1123 ձէՅ Ըսթրիթ Պահտնջները փութով կը վճարուին: Յաճախորդք միշտ գոհացում կատանան:

ՃԻՆԹՐՈԹ - ՊՐՈՏՐՈ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1815, 1821 ԹՈՒԼԱՐԻ ԸՍԹՐԻԹ Մեծաքանակ վաճառականք Նափայի, Սընօմայի ևն. գինիներու, տեղական և ներածեալ օղիներու: ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԷՅՃԷՆԹՆԵՐ Բիւմաթիզի ապահով դեղ ճանչցուած ՈՒԻԹՐՆԻ ՄԷՏԻՍԻՆԼ Լուրերուն: —Թէլէֆօն, Ուայթ 817:—

Թիւնները անկողմնակալ ոգով մը ուսումնասիրելէ վերջ՝ սա որոշ եզրակացութեան յանգած եմ թէ Մանուկեանի դէմ արձակուած վճիռը պէտք է հաւասարակէս բաժնել ամբաստանելոյն, ամբաստանողին, վկայներուն, փաստաբաններուն, դատաւորին և նոյն իսկ տասներկու երդուեալներու մէջտեղ:

Բայց ինչպէս որ չենք գիտեր թէ Մանուկեան քանի տարի պիտի ապրի բանտին մէջ՝ որպէսզի անոր համեմատ կատարենք մեր բաժանումի գործողութիւնը, այնպէս ալ չի պիտի կրնանք հասկնալ որակը այն արդարութեան և իրաւունքին որը դրամով միայն կառնուի: Աշխատելու է, սակայն, որ Մանուկեանը իր յանցանքին չափովը պատժուի և ոչ թէ՛ իր աղքատութեան:

Եթէ Մանուկեանը դրամի և ազարակի տէր՝ չամիչի լօրտ մը ըլլար՝ խնդիրը տարբեր երեւոյթ կառնէր, բայց որովհետեւ չէ՛ տրուած վճիռը չարդարադար և ոչ ալ կարդարանայ անտարբերութիւնը անոնց՝ որոնք խղճով չեն կրնար ընդունիլ տրուած վճռին չափաւորութիւնը:

Մարդասիրական զգացումով տողորուած Հայեր ինքզինքնին շահագրգռելու են այս խնդրով, վասնզի այս խնդրոյ բարեք կարգադրութիւնը մեծ կշիռ պիտի ունենայ ապագային Հայոց մէջ պատահելիք այս կարգի ուրիշ խնդիրներու վրայ . . . :

* * * * *

Ռաֆֆի դերասանական խումբը կը պատրաստուի Արշակ Բ.ի ողբերգութիւնը ներկայացնել յառաջիկայ Ծննդին՝ Պօսթոնի թատրոններէն միոյն մէջ:

Յաւալի է որ ցարդ չունեցանք կանոնաւոր խմբակ մը որ բան գործ ընէր քաղքէ քաղք պտտիլ և մեր անցեալ ու ներկայ կեանքէն քաղուած շահեկան ու կրթիչ դերերով, արտասահմանի Հայերու միտքն ու զգացումը կրթելու նպատել: Եթէ Ամերիկայի մէջ զանուած Հայերու իւրաքանչիւրը հինգ սէնթ տալ յօժարի՝ մեր ընկերական կեանքի մէջ եղած պակասներէն մէկը պակսած կըլլայ, պայմանաւ որ գիտնանք ըմբռնել բարոյապէս մաքուր և զբաղանքէն անարատ ներկայացումներու ազնուացնող ու բարձրացնող դերը:

* * * * *

Սուլթանը երէք միլիոն արժողութեամբ ռազմամթերքի ապսպրանք մը ըրած է:

Պատերազմ կայ արդեօք, թէ՛ չարք:

Եթէ պատերազմ՝ առարկութիւն չունինք, բայց եթէ չարք՝ խնարհաբար պիտի թելադրէինք նորին Արքայական վեհափառութեան որ զէնքերը Ամերիկայի յեղափոխական և ոչ յեղափոխական կուսակցութիւններուն հասցէին զրկուէր ուղղակի, որպէսզի իրար վերջացնելով՝ չարքերու պատճառներն ալ վերջանար:

Բայց եթէ Սուլթանը հակամէտ է մեր թելադրանքը գործնականացնել, կազաչենք որ չուշանայ, վասն զի վտանգ կայ որ հաշտուին:

ՊԻՇԱԿ

ձ. Մ. Սերոբեան, ձ. Պաննըր, Յ. Մ. Սերոբեան
Սան Ռօքիի Վայի Լմուտ Քօ,

ձ. ՊԱՆՆԸՐ, Վարիչ.
ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱԼՈՒԱԾ ԵՒ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
Թիւ 954 ԱՅ Փողոց, Ֆրէզնօ, Քալիֆօրնիա:

Թէլէֆօն, Մէյն 40
Եթէ կը փափաքիս գնել կամ ծախել մշակուած կամ անմշակ ամեն տեսակ կալուած՝ եկուր և մեզ տես թէ ինչ տեսակ առաջարկութիւններ կրնանք ներկայացնել քեզ: Ներկայացուցիչներն ենք շատ մը առաջնակարգ ապահովագրական ընկերութեանց, որոց համար ձեր գործերը կը խնդրենք:

Է. Օ. ՏՐԱՅԸՐ

2241 Ֆրէզնօ փողոց, — — — Ֆրէզնօ Քալ.
Թէլէֆօն, ՊԼՈՒ 76

Ամեն տեսակ փլաւիկ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ — Սամսըն Ուինտմիլի և Թէնքի:

ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԳԻՍԵԱՆ

1255 ԱՅ Փողոց, — — — Ֆրէզնօ.
ՀԱՅ ԿԱԿԱՆ ՍՐՃԱՐԱՆ
— Գոհացում կը տրուի բոլոր յաճախորդաց —

ձ. Ք. ԵՕՔԻՄ

Սալթ Քօրթ փողոց, Վայսէլիա, Քալիֆօրնիա:
Կը ծանուցանէ թէ 700 էյքրի չափ առաջնակարգ հող ունի Տայնուպայի մօտերը որ այգիի համար շատ յարմարութիւն ունի: Հողին տեսակներն են սև, ծանր, աւաղային և կարմիր: Զուրի իրաւունք հողին հետ: Քանի մը Հայեր գնած ու շատ գոչ մնացած են այս հողերէն: Գներն են՝ 20է մինչև 35 տուար էյքրը: Պայմանները՝ կարծուածէն աւելի դիւրին: Աւելի մանրամասնութեանց համար դիմել Քաղաքացիի գրասենեակը:

ՄԱՔՍՈՒԷԼ ԵՒ ՄԸՏՃ, ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉՔ

Ֆրէզնօ և ձէյ փողոցներուն անկիւնը, Ֆրէզնօ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՔԱԼԻՖՕՐՆԻՈՅ ՄԵՋ ԱՄԵՆԱԼԱԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՆ և ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԵՆ



Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի

ՇԱՐԿԱՆՔԱԹԵՐԹ

ՃԷՅ Փողոց, Էքսփոզիթըրի Շէնքին մէջ:

Հ. ԷԿԻՆԵԱՆ, ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ
ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգներու և Քանադայի Համար
Շարեկան մէկ ու կէս Տօլ. — Վեցամսեայ 75 Սէնթ
Ուրիշ երկիրներու Համար

Շարեկան 10 Ֆրանգ — — Վեցամսեայ 5 Ֆրանգ
Կը հրատարակուի ամեն Շաբաթ օրեր ի թիւ 1033
Քաժանորդագիրը կանխիկ վճարելի է միշտ

Նամակ, ծրար կամ դրամ կը ղրկուին խմբագրու-
թեան հետեւեալ հասցէի՝

To The Editor of
THE CITIZEN
P. O. Box 1224 Fresno, Cal.

THE CITIZEN

The Only Armenian Paper Published Weekly in the
State of California.

H. EGUINIAN, Editor and Manager

OFFICE, 1033 J STREET FRESNO, CAL.

SUBSCRIPTION RATES (Payable in Advance)

One Year..... \$1 50 | Six Months..... 75 Cents

ՅՐԷՉՆՕ, ԲԱԼԻՖՕՐՆԻԱ. ԳԵԿՏ. 13, 1902

ՍՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ

—0—

(Շարունակութիւն և վերջ)

Հոս՝ այս պատիկ քաղաքիս մէջ՝ տեղական ժողովր-
դի բանխմաց մասը ներքին գաղտնի հակակրութիւն
մը ունի մեզի դէմ՝ ճիշդ այս պատճառի համար: Ա-
նոնց ստացած տպաւորութիւնն ու համոզումը սա ե-
ղած է թէ Հայը կը ստէ, ամեն աննշան ինդիւրներու
համար, կը ստէ շատ անգամ, կը ստէ որովհետեւ սը-
տախօտութիւնը երկրորդ բնաւորութիւն դարձած և
խմորուած է անոր կազմուածքին հետ: Կրնայ քիչ մը
չափազանցութիւն ըլլալ այս կարծիքը, սակայն ճշ-
մարտութիւնը չենք կրնար չի տեսնել անոր մէջ:

Մտերմարար խօսինք իրարու հետ, Պ. ընթերցող,
քանի որ օտարներ չի կան՝ մեր խօսածները հասկցող:

Եթէ պահ մը մտածես ինքնիրենդ՝ չի՞ պիտի կը-
նաս յիշել պարագայներ՝ երբ պատիկ սուտի մը հա-
մար վարկաբեկ եղած ես ուրիշի մը առջև. կամ
թէ չի՞ պիտի յիշես պարագաներ երբ ճշմարտու-
թիւնը գրօղած ես լայնպիսի եղանակաւ մը որ դու
զքեզ մատնած ես խօսակցիդ առջև:

Գիտնալու է թէ տեղացիի մը սուտը իր անձին
միայն կը վերագրեն, բայց օտարականի մը՝ մանաւանդ
Հայու մը սուտը թէ՛ իր անձին և թէ՛ իր ազգայնու-
թեան կը վերագրեն՝ իբր ազգային յատկութիւն:

Գոնէ սովորական պարագաներու տակ՝ երբ մա-
նաւանդ մահու և կենաց խնդիր չի կայ՝ սուտ խօ-

սելու չէ բնաւ, վասն զի — ուրիշ ամեն նկատումներ
մէկ կողմ թողուով — ճշմարտախօս մարդը խնդրոյն յա-
ջող կողմը կը մնայ վերջապէս:

Չենք կրնար ուրանալ թէ ստախօսը կը յաջողի
շատ անգամ. երբեմն պատիկ ու անվնաս սուտ մը մեծ
յաջողութեամբ կը պահէ իր հաւատացեալը՝ ճշմար-
տութեան հազուատներով պաշտպանուած, բայց փոր-
ձը հաստատած է թէ այդ յաջողութիւնը ժամանա-
կաւոր է: Եթէ սուտը յաջողութիւն ծնելու յատկու-
թիւնը ունեցած ըլլար՝ մարդիկ ճշմարտութեան դիմա-
կով պիտի չը փորձէին պահել անոր դարչելի դէմքը:
Եւ սուտը այն ատեն միայն կրցած է ընդունուիլ՝ երբ
անոր խնկարկուն յաջողած է զայն ճշմարտութեան
գոյնով գունաւորել: Հարկ է արդեօք հոս կրկնել
բոլոր բարոյախօսներուն ըսածն ու քարոզածը թէ
ճշմարտութիւնը խօսող մարդուն համար պատիւ, յար-
գանք, վստահութիւն ու յաջողութիւն սպառնալար-
եալ են՝ ապահովագրական ամենավստահելի հաստա-
տութեան մը կողմէն:

Թրքական բարբարոտութիւններէ հեռի՝ ազատ երկ-
րի մը մէջ, ուր մեր գէշ սովորութիւններն կամաց կա-
մաց մոռնալու պարտականութիւնը կը ծանրանայ մեր
շունեռու վրայ, պէտք էր որ կարմրէինք՝ տեսնելով
այն գէշ տպաւորութիւնը զոր թողուցած ենք տեղա-
ցիներուն վրայ:

Կրնայ ըլլալ որ ընթերցողը՝ հարևանցի կերպով
դիտած ըլլալուն համար՝ չէ կարողացած նշմարել այն
կասկածն որ Հայու մը խօսքը կազդէ տեղացիի մը վը-
րայ ընդհանրապէս. բայց վստահ ըլլալու է թէ տե-
ղացիին հետ մօտէն շփում ունեցողները, կամ անոնք
որ քիչ մը խորը տեսնելու չափ սուր աչք ունին՝ զգա-
ցած ու գտած են զայն անվրէպ:

Եթէ կուզենք յարգուիլ տեղական ժողովրդէն, և
յարդիլի մարդիկ ըլլալ մեր պատիկ շրջանակին մէջ և
ամեն տեղ՝ ջանալու ենք ճշմարտախօս ըլլալ:

Ամերիկայի մէջ երկուդն չի կրնար մեզ ստախօսու-
թեան միջի, իսկ շահու կամ անկախութեան համար
ստեղծ անշահներ առևտուր մ'է միշտ:

Եթէ ստեղծ ունակութիւն մը դարձած է մեր մէջ՝
աշխատելու ենք զայն մոռնալ՝ թէ մեր անհատական
շահուն և թէ ազգային պատուոյն համար: Մէկ անհատ
կրնայ իր ընթացքով մեծ բաղմունքեան մը աղէկ կամ
գէշ դաղափար տալ իր ողջոյն ազգին վրայ:

Եւ մեր գաղթականներս՝ ազգային տեսակետէ նայե-
լով պարտինք ամեն տեղ, աշխարհի ունէ մէկ մասին
մէջ՝ հասարակաց դաղափարը շահիլ ի նպատակ Հայու-
թեան, վառնդի ժողովուրդներու ձայնը մեծ դեր ունի
խաղալիք՝ ազգաց բաղդին մէջ:

Ինչպէ՞ս կարելի է այս բնաւորութիւնը թօթափել:
Այո՛, կայ միջոց մը և մէկ միջոց մը միայն, որն
ի գործ դնելու համար հաստատուն կամքի միայն պէտք
ունինք:

Երբ առաւօտ անկողնէդ կեղնես՝ որոշէ և երգում ըրէ պատուիդ վրայ՝ այն օր սուտ չի խօսիլ, և որոշմանդ հաւատարիմ մնացիր: Երեկոյնները հաշիւ առար խղճիդ՝ Աներեւոյթին առջև, և տես՝ թէ կրցած ես որոշմանդ հաւատարիմ ըլլալ: Եթէ մեղանշած ես, նորէն փորձէ, կրկին և կրկին անգամ փորձէ, և օր մը ուղղամիտ, ճշմարտախօս պատկառելի և վստահելի մէկը կը լինիս՝ քեզ գիտցողներուն մէջ, և պատիւ կը բերես քեզ ծնող ազգին:

ՎԷՆԷՉՈՒԷԼԱ ԵՒ ԻՐ ԹՇՆԱՍԻՆԵՐԸ

Վէնէզուէլայի խնդիրը երթալով ծանր կերպարանք մը կ'առնէ: Ընթերցողը գիտեն թէ Գերմանիա և Անգլիա պահանջ մը ունին Ամերիկեան այս փոքր Հանրապետութեան վրայ՝ որ ներկայ պարագայներու տակ՝ անկարող է զայն վճարել: Վերջերս Եւրոպական այս մեծ կառավարութիւնները սպառնալից վերջնագիր մը տուած էին այս մասին Նախագահ Քասթրոյի: Կը կարծուէր թէ այս վերջնագրի պատասխանը ստանալէ առաջ ու է բայ պիտի չառնուէր երկու մեծ տերութեանց կողմէ: Սակայն Լա Կուէրայէ կը հզօագրեն թէ անցեալ Չորեքշաբթի օր Գերմանական և Անգլիական միացեալ նաւատորմիղը որ երկար ատենէ ի վեր Վէնէզուէլայի ջուրերը կը գտնուէր՝ առանց կանխաւոր տալու՝ պղտիկ Հանրապետութեան զրահւորներուն վրայ կը քալէ և յանուն Ազգայնոյ թագաւորին ու Գերմանիոյ Կայսեր կը պահանջէ և կը սպառնայ առանց անձնատուր ըլլալ: Այս վերջինք՝ ի հարկէ՝ տեղի կուտան առանց մէկ հարուած իսկ կրակելու: Նոյն օր միացեալ նաւատորմիղը Լա Կուէրայի նաւահանգստէն բացերը հանել կուտայ Վէնէզուէլայի նաւերէն քանիններն ու խորտակելով կընկզմէ զանոնք: Գիշերը բազմաթիւ նաւազներ ցամաքը կիւնեն ու տեղոյն Գերման և Անգլիացի հպատակները նաւ կը փոխադրեն:

Անդին Նախագահ Քասթրոյի հրամանաւ Գերման և Անգլիացի հպատակները կը ձերբակալուին ամէն կողմէ և բանտ կը զրուին:

Վերջի հեռագիրներ կըսեն թէ Անգլիական ու Գերմանական նաւային զօրքեր ցամաք ելած են՝ պղտիկ Հանրապետութեան Նախագահը բռնելու նպատակաւ, և թէ փողոցներու մէջ կ'ախ տեղի կունենայ շատ տեղեր՝ տեղական ու Եւրոպացի զօրաց մէջ:

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏԻՐ ԶԷՑԹԻՆ ԵՒ ԶԻԹԱԻԻԳ

Մարտիրոսեան Եղբարք,

ԹԻԻ 344 ԷՖ ՓՈՂՈՑ, ՖՐԷՋՏՕ.

Կը ծանուցանեն հասարակութեան թէ խիտ չափաւոր գներով ի վաճառ հանած են վերջերս տեղական սև ու կանանչ զէյթին՝ թէ պատրաստուած և թէ անպատրաստ վիճակի մէջ, և շատ ընտիր ու զուտ ձիթախղ: Յանձնարարութիւնք փութով ու խընամով կը կատարուին:

Չեք ոչ Չիքապտոնչ

ՀՍ.ԻԿԻԹԸ ՀՍ.ԻԷՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԿԵՐՊՈՎ

Տքթ. Բլուզանդ Նշիկեան հաւի համար կուտ մը հընարած ու ի վաճառ հանած է ծամանակէ մը ի վեր: Այս նոր կուտը, որ ոչ միայն հաւերը կը գիրցնէ՝ այլ և հաւկիթ ածել կուտայ անոնց, կը գործածուի այժմ թէ Միացեալ Նահանգներուն ամեն կողմերը, և թէ Քանատայի և Անգլիոյ մէջ, ուր մեծ ընդունելութիւն զրտած է: Մանրակրկիտ քննութեամբ հաստատուած է թէ մէկ սէնթի այս նորահնար կուտով՝ չորս սէնթ աւելի արդիւնք կարելի է ձեռք բերել՝ մանաւանդ այս եղանակին երբ երկոտասանեակ մը հաւկիթը գիւրին է ծախել 25 սէնթի: Կարժէ փորձել այս կուտէն, որ կը ծախուի քաղաքիս մէջ՝ Քըթնըր և Կրաֆթ վաճառատուններու մէջ, անոր անունն է Միտլենա Փօլթրի Ֆիլա: Գիտնալու է թէ հասարակ ցորենի գնէն շատ տարբերութիւն չունի այս հատիկին գինը: Եատեր փորձած ու գոհ մնացած են անկէ ամէն կերպով: Եատ վկայութիւններ տրուած են այս մասին: Այս վկայութեանց մէկ բովանդակութիւնը պիտի հրատարակուի քիչ ատենէն առանձին հատորով: Գնե՛ք առաջ յիշելու է թէ այս հատիկներուն տարբեր տեսակները կան: Գնած ժամանակ ըսելու է թէ ձեր ուղամը հաւ գիրցնելու պիտի ծառայէ՝ թէ հաւկիթ ածել տալու համար: Անունը չը մոռնաք:

Midland Poultry Feed.

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ԱՎԵՐԻԿԵԱՆ ՃԱՇԱՐԱՆ

1249 Ա, փողոց, Ֆրէզնօ, Քալ.

Թորոս Չրաքեան — — — Ճաշարանատէր Յարգանք կը ծանուցանէ իր յաճախորդներուն և հայ հասարակութեան թէ իր նախկին՝ Ճէյ փողոցի ճաշարանէն փոխադրուած է յիշեալ խանութը, ուր նորանոր կարգադրութիւններ ու յաւելումներ ըրած է: Կերակուրներու գնին վրայ թէև յաւելում մը չէ եղած, բայց մաքրութիւն, առատութիւն և ընտիր կերակուր աւել կարենալու համար ամեն նախապատրաստութիւն եղած է, անանկ որ ոչ ոք պիտի ամչնայ զայն Հայկական ճաշարան մը սնուանելու: Փորձեցէք մի անգամ:

Կուզենք որ ձեր գնելիք պատի թողթերը, ներկ ու պատկերի շրջանակները մեզմէ ծախու առնէք: Գնելու հետ ընտրութեան իրաւունք: Պատի թողթեր կը փակցունենք, ու կը ներկենք:

Բարօնա եւ Տիք, 1153-1155 Ա, փողոց, Էլեմօնթրի կեցը:

Վ. ՓԱՐԻԸՐ ԼԱՅԸՆ,
Կանկարասեաց Թագաւորը ի
Ֆրէզնօ, Քալիֆորնիա


ՍԱՆԹԱ ՖԻ

** ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐՈՒ ԼՍԻԱԳՈՅՆ ԳԻԾԸ **

Ճամբորդին համար ամեն հանգիստ և դիւրութիւն

Սանթա Ֆի երկաթուղեաց ճամբան լաւագոյնը, կարճ ու ամենէ արագն է՝ արեւելք երթալու կամ արեւելքէ հաս գալու համար:

Ուղղակի շոգենաւային և երկաթուղիի տոմսեր Հին Աշխարհի ամեն կողմերուն և ամեն կողմերէն գալու համար: Տոմսի գրամները կրնան հաս վճարուիլ: Եթէ տոմսերը չի գործածուին՝ դրամը



եա կը տրուի: Սան Ֆրանսիսկօ երթալու լաւագոյն ճամբան է այս: Տեղեկութիւններ սիրով կը տրուին թէ՛ կայարանը և թէ՛ քաղաքիս գրասենեակը՝ ի թիւ 1031 ձէյ փողոց, Ֆրէզնօ: Թ. Ա. ՃՕՆՍ, Գրծկլ.

Ս Ա Ն Թ Ա Ֆ Ի

Երկաքոչողեաց Ընկերուցիւն

Ֆ Ր Է Չ Ն Օ

ԸՆՏՐՐԹԷՅՔԻՆԿ ՓԱՐԼԸՐՍ

ՇԱՆՆԸՆ և ՊԻԼ, Տէրեր

1154 ձէյ փողոց, — Ֆրէզնօ. — Թէլէֆօն Մէյն 160

Ե Ս Թ Ե Ր

Գրեց՝ ՎԱՐԴԵՆԻ

Ազգային իրական կեանքէ առնուած 137 երեսներէ բաղկացեալ վեպատանութիւն մ'է՝ հայ ազգիկէ մը գրուած: Տպագրութիւնը մաքուր է և հատորը լաթակազմ: Գննդի և Նոր Տարիի համար յարմար նուէր:

Գինն է մէկ տոլար, կը ծախուի Ե. Յ. Մեղանի քով, թիւ 403 Էլ փողոց, Ֆրէզնօ:

ՆՈՐ ԴԱՐԸ

Ա.

Անցաւ դար մ'ալ՝ արեան օրեր,
Դար մը յորում շատ լացինք.
Ուրիշները արեւ տեսան,
Մենք շարունակ ողբացինք:

Մեզ բաղդակից ուրիշ ազինք
Խորտակեցին շղթաներ
Ազատ եղան կապանքներէ,
Դարձան իրենց բաղդին տէր:

Շատ աննշան պղտիկ ցեղեր
Դիրք բռնեցին՝ զարգացան,
Ուրոյն երկիր իրենց համար
Հայրենիքներ ունեցան:

Անոնց ցրուած հէգ զաւակներ
Վերադարձան՝ եկան տուն.
Հոն զօրացան, յառաջ գացին
Անխախտ յոյսով հաստատուն:

Անցնող դարու արեանց մէջէն
Անոնք սրով խեցին
Իրենց փառքն ու ազատութիւն
Արեան գնով գնեցին:

Տգիտութեան անդունդներէն
Վեր բարձրացան դէպի լոյս.
Փուշերն անկէ անհետացան՝
Վարդ ծըցաւ ինքնարոյս:

Բայց Հայ ազգը գերի մնաց,
Գերի ցայսօր. իր ձեռքեր
Շղթաներով ամուր կապուած՝
Կախնաւոր մնայ դեռ:

Քաններորդ դարու սեմէն
Ամօթապարտ ներս կուգանք
Անհայրենիք՝ առանց տունի.
Չունինք փառք մը, չունինք կեանք:

Հայաստանի շատ զաւակներ
Յօտար երկիր ցիր ու ցան
Տուն Հայրենիք թրքին թողած
Գացին յաւէտ հեռացան:

Անցնող դարէն մեզմէ շատեր
Փուշէ պակ խեցին.
Ոմանք թրքին սուրը առած՝
Աղդին կողը խեցին:

Հայ արիւնը ծով էր կազմեց,
Հայաստանը լճացաւ.
Ազգին որբը այդ ծովին մէջ
Խորասուզեալ խղղեցաւ:

Եւ այս դարու սեմէն այսօր
Ներս կը մտնենք դիտիկոր,
Շղթաներով ծանրաբեռնեալ
Սպրուկ գերի սինլքոր:

Մեր սրտերը կրակի մէջ
Կայրին սակայն, կողբանք դեռ.
Չենք միանար թօթափելու
Մեր կապանքը՝ ծանր բեռ:

(Մնացեալը յաջորդիւ)

Հ. Է.

GEORGE BROS.

ՀԱԳՈՒՍՏՆԵՐՈՒ, ԳԼԽԱՐԿԻ ԵՒ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ
ՃԵՐՄԱԿԵՂԷՆԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ ԵՒ
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՐՁԱԿՆԵՐ.

1109 ՃԷՑ Փողոց, — Ֆիսք Պլաք — Ֆրէզնո.
Թէլէֆօն — — — Ուայթ 711

Հասարակութիւնը վաղուց ի վեր փորձով գիտէ արդէն թէ այս խանութին մէջ ծախուած ամէն ապրանք իրենց տեսակներուն մէջ լաւագոյններն են, բայց շատ քիչեր գիտեն թէ իրենց գիները՝ բազումատարար ուրիշներէ բնաւ տարբերութիւն չունին:

Կը փափաքինք որ անգամ մը փորձէք և փտաւհացնէք դուք զձեզ այս կարևոր կէտին համար. անկէ յետոյ ուրիշ տեղ չէք երթար գնել ինչ որ կարելի է ստանալ ճՕՐՃ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ:

ՍԻՐԱ, ՀԱՐԱ, ԿԱՆ

Երիտասարդ տղան աղջիկ մը կը սրիէ — Այդ իրեն գիտնալիք գործն է: Դեռատի աղջիկը երիտասարդ մը կը սիրէ — Այդ ալ անոր գիտնալիք բանն է: Ասոնք որ մը կամուսնանան ու պէտքը կըզգան

ՓԱՅՏԻ ԵՒ ԱԾՈՒԽԻ

ԱՅԴ ԱԼ ՄԵՐ ԳՈՐԾՆ Է

Տօրսիյ Րապիևսրն Ընկ.

ՆՊԱՐԵՂԷՆ, ԵՐԿԱԹԵՂԷՆ, ԽՈՏ, ԳԱՐԻ ԵՒՆ.
Ֆրէզնո և ԱՅ Փողոցներու անկիւնը

ԲԵՄԱԽՕՆԵՐՈՒ ԲԱՐԲԵՐԷՆ

— 0 —

Կ. Պոսոյ Բիւրակն Հանդէսին մէջ Պ. Գ. Զուլուսեան այս վերնադրով յօգուած մը գրած է որուն մէկ մասը կարտատպէնք այսօր յօգուած մեր այն ատենախօսներուն՝ որոնք պէտք ունին լրագրական քննադատութիւններ ու թելադրութիւններ լսել:

— 0 —

Այս ատենախօսներէն ոմանք կանխաւ պատրաստութիւն չեն տեսներ բեմախօսութեան, և երբեմն ալ իրենց բեղմնաւոր մտքին փտաւհելով, յանպատրաստից, կը կանգնին բեմին վրայ, իրենց սովորական, ու մանաւանդ սրբազան պարտականութիւնը կատարելու — ուղղելու ժողովուրդը, անոր կրօնական զգացումները արծարծելու և անոր մէջ ճշմարիտ մեծութեան հրայրքը ստեղծելու: Հարկ չիկայ ապացուցանելու թէ ո՞րչափ վսեմագոյն է իրենց կոչումը: Միայն ցաւալի ու ոչ պատուարբեր է ատենել թէ անոնցմէ ոմանք կանխաւ իրենց խօսելիքին վրայ լաւ մը անդրադառնալով չէ որ կը ներկայանան, այլ նոյն իսկ իրենց դատապարտելի ինքնաւստահութեամբ ու քննադատելի անհոգութեամբը: Աւելորդ է այսպիսիներու յառաջ բերած ազդեցութեան վնասակարութիւնը չեղտել ու մասնանիչ ընել՝ մասնաւոր որ Հանրութեան ղէմքին վրայ նկարուած ծամածուծութիւնները՝ ամենէն զօրեղ ու կենդանի վկայներ են անոր զգացած ճանճրոյթին ու զժգոհանքին: Այս պարագան պէտք էր որ նկատողութեան

առնուէր բեմախօսին կողմէ և անով վերջ տրուէր իր պայմանադրական անլի ճոռմարանութեան որ ժողովրդին հոգեւորութիւնը գրգռելէ աւելի, կ'ուժայնէ զայն, ճանճրոյթի ծանր ճնշումին տակ:

Ասանկները աւելի լաւ է որ բոլոր ժամանակը օրհնաբանութեան ու երգասացութեան յատկացնեն, քան թէ ճախող բեմասացութեան մը որ ճանճրոյթի ամեն տարր կը պարունակէ իր մէջ:

Կան ուրիշներ ալ որոնք անպատճառ չափուած ու ճշդուած ժամանակը լրացնելու ջանադիր կը գտնուին, հաւատարիմ ճշդապահութեամբ մը, չուզնազելով հասկնալ թէ ատենախօսութեան երկարութիւնը և կամ սահմանադրուած չափով խօսիլը չէ որ ժողովուրդին մէջ շինիչ ու օգտակար բաղձանքներ պիտի արթնցնէ, այլ նոյն իսկ ամփոփ, բոցաշունչ ու համադիչ ատենախօսութիւն մը որ խօսողին ու լսողին տրամադրութիւններուն համեմատի: Դիտուած է թէ երբ մինչև անգամ հոգեյոյգ ատենախօսութիւններ ժամանակի բաւական երկար տեւողութիւն մը կը գրաւեն, անոնք բնաւ ակնկալուած արգիւնքը առած չեն բերեր որովհետև ժողովուրդին ուշադրութիւնը բնախօսական կանոնի մը կը հպատակի, և երբ զայն՝ երկար ատեն հարկադրենք որ լարուած դիրք մը ունենայ, յոգնութիւն ու թախիծը կուզան շրջապատել զինքը և կը մտոցնեն անոր նախկին բոլոր թարմ, առոյգ ոգեւորիչ սպասուրութիւնը, եթէ մանաւանդ՝ ֆիզիքական անհրաժեշտ ու հանգստաւէտ պայմաններ ալ իրենց բացակայութեամբը փայլին: Ուստի, զիւրին է հասկնալ թէ ժամանակը անհրաժեշտաբար լրացնելու և կամ որչափ ժամանակէն աւելի կամ պակաս չի խօսելու գրութիւնը այլանդակ ու անխմտաւ է: Ինչպէս աղօտ կերպով ըսուեցաւ արդէն՝ պէտք է նոյն իսկ ժողովուրդին ու բեմախօսին հոգեկան արամագրութիւնները նկատի առնել և ոչ սահմանազճուած ժամանակամիջոցը որ ու է ատեն բնաւ լաւ ու բանաւոր առաջնորդ մը չի կրնար ըլլալ: Ինչպէս մանկավարժական կարեւոր սկզբունք մըն է դասընթացի դասը, երբ աշակերտներու վրայ ճանճրոյթի ու յոգնութեան նշաններ կը տեսնուին, նոյնպէս ալ շարունակելու չէ ատենախօսութիւնը, երբ որ ժողովուրդին մեծամասնութիւնը քունի խոնարհական շարժումներով և կամ անձկալից ու խոնջ գիմազճով մըն է որ կուսկնդրէ: Բեմախօսը նաև, անմիջապէս բաւ համարելու է ատենախօսութիւնը, երբ կը տեսնէ թէ ժամանակը լրանալէն առաջ, իր տրամադրելի դրամագրուիւր սպասուեցաւ: Հակառակ պարագային, օրուան նիւթին բոլորովին անկապակից իրերու վրայ պիտի խօսի որոնք բնականաբար առջի ըսուածներուն մեկնարանութիւնը և կամ մասնաւոր պարագայները չըլլալով, ունկնդիրներու միտքը պիտի պտտոցնեն անտրոշ ու անճրագիր ուղղութիւններու մէջ:

Կայ բեմախօսներու ուրիշ դաս մըն ալ որ հազար անգամ յեղյեղուած նիւթը նորէն տաքցնելու և իր բարեմիտ ժողովուրդին հրամայելու աղւորիկ սովորութիւնը ունի: Այս անձերը նորէն լաւ ծառայութիւն

պիտի մատուցանելին, եթէ նոյն նիւթը տարբեր տեսակէտներով քննելին, անոր մէջ նոր և շահեկան պարագայներ գտնելին ու այնպէս ներկայացնելին ժողովրդին՝ համեղ ու զբաւիչ ոճով մը: Կերեւայ թէ այսպիսիները կամ իրենց պաշտօնին լայն գիտակցութիւն չունին ու ժողովուրդը պարզապէս շահագործելիք հանք մը կը նկատեն, և կամ բոլորովին կանգիտանան սա պարզ ու հանրածանօթ իրողութիւնը թէ միօրինակութիւնը ձանձրացուցիչ ու հետեւապէս անհաճօյ է մարդկային սրտին՝ այնչափ սրչափօր նորը ու փոփոխականը շահագրգիռ ու հաճելի են: Անշուշտ այս սկզբունքին կիրառումը պիտի վերցնէ քրթմնջումն ու զժգոհանքը որ երբեմն միօրինակ ու ծանծաղ քարոզներու ծնունդն են: Ժողովուրդին հոգեկան ճաշակն ալ այնուհետեւ հաճօյք մը պիտի զգայ, աւելի կազդուրուելով:

**** ՈՍԿԵՓՈՐԻԿ ****

—*—

****Եթէ կուզես հաւերուզ հաւելի՞ս ամէլ տալ բռնի կերպով Տըթ. Նշիկեանի Հնարած Միտլէնա Փօլթրի Ֆիտէն գնէ անոնց համար:**

****Յիսուն տարեկան մարդ մը 12,000 մըն քաւած կըլլայ, ինն ու կէս թըն հաց, միս, բանջարեղէն և այլն կերած, և 7,000 կալոն ջուր խմած կըլլայ իր կեանքին մէջ. բայց ինքը կը կռնէ՝ միջին հաշուով 150 փաունտի չափ:**

****Առաջիկայ Հինգշաբթի օրը Գեկա. 18 ին Մր. Ս. Մ. Մինասեանի Միացեալ Նահանգներն հասնելուն յիսուն և չորրորդ տարեդարձն է: Այդ առթիւ յիշեալ Պարոնը հրաւեր մը տուած է Ֆրէզնոյի բոլոր Հայոց որ բարեհաճին նոյն աւուր երեկոյեան ժամը եօթ ու կէսին Հայ Երիցական Եկեղեցոյ մատրան մէջ հաւաքուիլ, որ ինք իր կենաց համառօտ նկարագրութիւնը պիտի ընէ: Մէկ քանի ուրիշ Հայ բարեկամք ալ խօստացած են կարճ ուղերձներ ընել: Երգեցողութիւն ևս տեղի պիտի ունենայ:**

*** Աւաշինկիթընէ կը հեռադրեն թէ քաղաքիս Փօսթ Մասթըր ձօն Վ. Եօրթի անունը Օրնադիրներուն (Քօնկրէս) ներկայացուած է՝ վաւերացուելու համար նոյն պաշտօնին մէջ՝ երկրորդ շրջանի մը համար: Եւ որովհետեւ ո և է ընդիմութիւն երևան չէ եկած, ուստի Եօրթի վերահաստատութիւնը անկասկածելի կը թուի:**

Հրեային մէկը գետի մը մէջ լողացած միջոցին խորունկ տեղ մը կիլնայ ու կակտի օգնութիւն պուար: Իսլամասացի մը՝ խղրուող հրէային ձայնը բնելով անոր կը մօտենայ և կըսէ.

—Ձե՛ս գիտեր թէ հոս լողալը արգելուած է և թէ այս արգելքին հակառակ գործալները վեց տուար տու գանքի կենթարկուին:

Հրեայն այս սպառնալիքը իմանալուն պէս՝ ձայնը կտրեց, եզերք հասնելու փորձն ու ձիւր գաղբեցուց և տուգանքէն ազատելու համար՝ երկու թևերը օգին մէջ բարձրացնելով՝ ծովամայն կորսուեցաւ:

Առեւտրական Կոտորած

Ա. ԸՍԹԱՔ

Հանդերձախաւառ

Թանգրակիլինկի առթիւ՝ գները կէսի բաժնուած են: 1027 ձէյ փողոց, — — — Ֆրէզնօ, Քալ.

ԳՆԱ. ԱՌ

ՊԱՐԻԵԹ ՀԻՔՍ ԸՆԿ.

ՎԱՌԱՐԱՆՆԵՐՈՒ, ՊՈՂՊՍՏԵԱՅ ԲՆՆՉԵՐՈՒ, ՆԵՐԿԻ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԵՐԿԱԹԵՂԷՆ

1035-1041 ԱՅ ՓՈՂՈՅ

Թէլէֆօն

Ֆրէզնօ, ՔԱԼ

Էքսչէնջ — թիւ 2

ՄԵՐ

10 ՏՈՒԱՐՆՈՑ ՀԱՆԴԵՐՉԵՂԷՆՆԵՐԸ

Կը վերաբերին այն տեսակներուն որք ուրիշ տեղ 12,50 և 15ի կը ծախուին: Նոյնօրինակ խօսքեր ուրիշ անգամ ալ զուցէ լսած, բայց ապրանքը տեսնելէ վերջ յուսախար եղած ես: Մենք ալ նոյնը կըսենք, զի ԳԻՏԵՆՔԻ Թէ յուսախար չի պիտի ըլլատ, այլ պիտի զարմանաս երբ տեսնես ապրանքը:

Աստիք շինուած են շէվիլթ, սէրճ, քլէյ ու օրսթըա և քաշմիր կերպաներէ, ու կտրուած են վերջի ձևերուն վրայ: Քուկինդ այսօր գնէ:

The

G. O. D. STORE

Louis Solomon
1737 Mariposa St.

ՕՔԹԱՎ ՏԱՐՃԷԼԻՍ

Քաղդիսական Հացագործ.

ԿԸ ՎԱՃԱՌԷ ՆԱԵԻ ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏԻՐ ԳԻՆԻ 4318 Իէյ փողոց — — — Ֆրէզնօ, Քալ.

Տըք. Յ. Հ. Բարսեղեան

Ֆրէզնօ ԼՕՆ ԷՆՏ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԱՆՔ ՊԻՆՏԻՆԿ Սենեակ 16 17, Թէլէֆօն Պլու 492. Ֆրէզնօ Քալ.